



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPEENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԵՎ ՇԻՐՈՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 5065/06)

ՎՃԻՌ

(ըստ էության)

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

20 հուլիսի 2010թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

20/10/2010

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

Հովհաննիսյանը եւ Շիրոյանն ընդդէմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Ժոզեփ Բասադեւալ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Էլիզաբեթ Ֆուրա [Elisabet Fura],

Բոշտյան Մ. Զուպանչիչ [Boštjan M. Zupančič],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Ինետա Զիմելե [Ineta Ziemele],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Էն Փաուեր [Ann Power]՝ դատավորներ,

եւ Սանտիագո Կեսադա [Santiago Quesada]՝ Բաժանմունքի քարտուղար,

2010 թվականի հունիսի 29-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,
կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է Սարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին՝ կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության երեք քաղաքացիներ
պրն Հովհաննես Հովհաննիսյանի, տկն Աստղիկ Հովհաննիսյանի եւ
տկն Դիանա Շիրոյանի (ղիմումատուներ) կողմից ընդդէմ Հայաստանի
Հանրապետության՝ 2006 թվականի հունվարի 17-ին Դատարան ներկայացված
գանգատի (թիվ 5065/06) հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան
պրն Վ.Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը
(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական

դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2007 թվականի սեպտեմբերի 3-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշել է գանգատն ուղարկել Կառավարություն: Որոշվել է նաև գանգատի ըստ էության քննությունն իրականացնել դրա ընդունելիության քննության հետ միաժամանակ (Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1976, 1973 եւ 1999 թվականներին եւ բնակվում են Երեւանում:

5. Ըստ դիմումատուների՝ նրանք Երեւան քաղաքի Բուզանդի 17 հասցեում գտնվող 66.8 քառ. մետր ընդհանուր մակերեսով բնակարանի 33.8 քառ. մետր մակերեսի նկատմամբ ունեցել են օգտագործման իրավունք: Պարզվում է, որ բնակարանի սեփականատերն իրենց ընտանիքի անդամ Կ.Հ.-ն էր: Կառավարությունը վիճարկել է այդ պնդումը եւ նշել, որ միայն դիմումատուներ Հովհաննես Հովհաննիսյանն ու Աստղիկ Հովհաննիսյանն են (առաջին դիմումատու եւ երկրորդ դիմումատու) ունեցել այդ իրավունքը, մինչդեռ դիմումատու Դիանա Շիրոյանը (երրորդ դիմումատու), որն անչափահաս էր, ուներ տվյալ բնակարանում միայն բնակվելու իրավունք:

6. 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով հաստատել է Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր եւ շինություններ) օտարման գոտիները՝ 345 000 քառ. մետր ընդհանուր մակերեսով: Բուզանդ փողոցը ներառվել է այդ օտարման գոտիների ցանկում:

7. 2004 թվականի հունիսի 17-ին Կառավարությունը որոշել է Բուզանդի փողոցի մի հատվածի (որը հետագայում պետք է վերանվանվեր Գլխավոր պողոտա) կառուցապատումն իրականացնելու նպատակով պայմանագիր կնքել «Վիզկոն» ՍՊԸ մասնավոր ընկերության հետ:

8. 2004 թվականի հոկտեմբերի 1-ին «Վիզկոն» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի հետ կնքել է համաձայնագիր, որով, *inter alia* (ի թիվս այլնի), առաջինին իրավունք է վերապահվել ուղղակիորեն բանակցել օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատերերի հետ, իսկ բանակցությունների ձախողման դեպքում պետության անունից հայց ներկայացնել դատարան՝ սեփականության հարկադիր օտարման պահանջով:

9. 2005 թվականի փետրվարի 25-ին «Վիզկոն» ՍՊԸ-ն նամակով տեղեկացրել է առաջին եւ երկրորդ դիմումատուներին, որ տվյալ բնակարանը գտնվում է Գլխավոր պողոտայի օտարման գոտում եւ պետք է վերցվի պետության կարիքների համար: Յուրաքանչյուր դիմումատուի առաջարկվել է 3 500 ամերիկյան դոլարին (ԱՄՆ դոլարին) համարժեք ՀՀ դրամի չափով ֆինանսական խրախուսում՝ Կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 950 որոշմամբ հաստատված փոխհատուցման կարգի 7-րդ կետի «գ» ենթակետին եւ 8-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան (տե՛ս ստորեւ՝ 26-րդ եւ 27-րդ պարբերությունները. այսուհետ՝ փոխհատուցման կարգ):

10. Պարզվում է, որ առաջին եւ երկրորդ դիմումատուները չեն ընդունել այդ առաջարկը:

11. Չպարզված օրը «Վիզկոն» ՍՊԸ-ն պետության անունից հայց է ներկայացրել առաջին եւ երկրորդ դիմումատուների դեմ՝ պահանջելով դադարեցնել նրանց օգտագործման իրավունքը՝ ֆինանսական խրախուսում վճարելու միջոցով, եւ վտարել բոլոր դիմումատուներին՝ վկայակոչելով, *inter alia*, Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ եւ 220-րդ հոդվածները: Հայցվորը պնդել է, որ օգտագործման իրավունք ունեցող անձինք, համաձայն փոխհատուցման կարգի 8-րդ կետի, իրավունք ունեն ստանալու 3 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով խրախուսում:

12. Պարզվում է, որ «Վիզկոն» ՍՊԸ-ն դատական վարույթի ընթացքում առաջարկել է փոխհատուցման նույն գումարը նաեւ երրորդ դիմումատուին, քանի որ նա նույնպես գրանցված էր տվյալ բնակարանում: Երրորդ դիմումատուն ներգրավվել է դատական վարույթին՝ որպես համապատասխանող:

13. 2005 թվականի մարտի 2-ին «Վիզկոն» ՍՊԸ-ի եւ բնակարանի սեփականատեր Կ.Հ.-ի միջեւ կնքվել է պայմանագիր, ըստ որի՝ նա համաձայնվել է հանձնել բնակարանը պետությանը՝ այլ բնակարանի դիմաց: Պարզվում է, որ մյուս երկու անձինք, որոնք նույնպես ունեին նույն բնակարանի օգտագործման իրավունք, ընդունել են առաջարկված դրամային հատուցումը եւ հրաժարվել իրենց իրավունքներից:

14. 2005 թվականի մարտի 16-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանը բավարարել է «Վիզկոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայցը՝ դադարեցնելով դիմումատուների օգտագործման իրավունքը եւ որպես փոխհատուցում տրամադրելով 10 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով գումար: Դատարանն իր որոշումը հիմնավորել է Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ 220-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաեւ փոխհատուցման կարգի 10-րդ կետով:

15. 2005 թվականի մարտի 31-ին դիմումատուները վերաքննիչ բողոք են ներկայացրել:

16. 2005 թվականի հունիսի 3-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը բավարարել է «Վիզկոն» ՍՊԸ-ի պահանջը՝ Վարչական շրջանի դատարանի կողմից վկայակոչված նույն հիմքերով:

17. 2005 թվականի հունիսի 16-ին մեկ այլ պայմանագիր է կնքվել «Վիզկոն» ՍՊԸ-ի եւ բնակարանի սեփականատեր Կ.Հ.-ի միջեւ, որը նույնաբովանդակ էր 2005 թվականի մարտի 2-ի պայմանագրի հետ:

18. 2005 թվականի հունիսի 21-ին դիմումատուները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որին ի լրումն բողոք է ներկայացվել 2005 թվականի հուլիսի 15-ին:

19. 2005 թվականի հունիսի 24-ին պաշտոնապես գրանցվել է բնակարանի

նկատմամբ պետության սեփականության իրավունքը՝ հիմք ընդունելով 2005 թվականի հունիսի 16-ի պայմանագիրը:

20. 2005 թվականի հուլիսի 18-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուների բողոքը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Բնակելի տարածության օգտագործման իրավունքին վերաբերող ներպետական դրույթները

21. Համապատասխան ներպետական դրույթների համառոտ շարադրանքը տե՛ս Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի [*Minasyan and Semerjyan v. Armenia*] գործով վճռում (թիվ 27651/05, §§ 23 եւ 34-43, 2009 թվականի հունիսի 23):

Բ. Այլ վերաբերելի ներպետական դրույթներ

1. Քաղաքացիական օրենսգիրք (տվյալ ժամանակահատվածում գործող)

22. 135-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը եւ այլ գույքային իրավունքներ, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

23. 176-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

24. 218-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանվում էր, որ հողամասը սեփականատիրոջից կարող է վերցվել պետության կամ համայնքի կարիքների համար՝ դրա գինը հատուցելու միջոցով: Կախված այն բանից, թե ում կարիքների համար է վերցվում հողամասը, դրա գինը հատուցում է պետությունը կամ

համայնքը: Պետության կամ համայնքի կարիքների համար հողամաս վերցնելու մասին որոշում ընդունում է պետական մարմինը:

25. 220-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում էր, որ եթե պետության կարիքների համար վերցնելու ենթակա հողամասի սեփականատիրոջ հետ համաձայնություն ձեռք չի բերվել հատուցման գնի կամ հատուցման այլ պայմանների վերաբերյալ, ապա համապատասխան պետական մարմինը կարող է հողամասը վերցնելու մասին հայց հարուցել դատարան:

2. Կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 950 որոշումը՝ «Երեւան քաղաքի Հյուսիսային պողոտայի եւ օտարման այլ գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը վերցնելու, փոխհատուցելու, գնային առաջարկը ձեւավորելու եւ իրացնելու կարգը հաստատելու մասին» (տվյալ ժամանակահատվածում գործող)

26. Փոխհատուցման կարգի 7-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ եւ նրանց անչափահաս երեխաները, որոնք հաշվառված էին այդ թվում ապօրինի շինություններում՝ նախքան իրավասու պետական մարմնի՝ պետության կարիքների համար հողամասը վերցնելու մասին որոշումն ընդունելու հիման վրա պետական գրանցում կատարելու օրը (2001 թվականի օգոստոսի 28), պետք է ստանային 2 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով աջակցություն՝ հիմք ընդունելով հաշվառումը հաստատող փաստաթուղթը (անձնագիր, ծննդյան վկայական կամ հաշվառումը վարող իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք):

27. Փոխհատուցման կարգի 8-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ այդ կարգի 7-րդ կետի «գ» ենթակետում նշված անձինք պետք է ստանային 1 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով աջակցություն:

28. Փոխհատուցման կարգի 10-րդ կետի համաձայն՝ օտարման գոտում գտնվող հողամասի նկատմամբ օրենքով սահմանված կարգով օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած անձինք որպես փոխհատուցում պետք է ստանային հանձնված հողամասի օգտագործման կամ վարձակալության

իրավունքի գնահատման արժեքը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

29. Դիմումատուները բողոք են ներկայացրել առ այն, որ իրենց գույքից զրկելու հետեւանքով խախտվել են Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված երաշխիքները, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Կողմերի փաստարկները

30. Կառավարությունը նշել է, որ դիմումատուները չեն ունեցել «գույք»՝ Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Օտարման ժամանակ բնակարանի միակ սեփականատերը պետությունն էր, ինչի մասին են վկայում պետության եւ բնակարանի նախկին սեփականատիրոջ՝ Կ.Հ.-ի միջեւ կնքված երկու պայմանագրերը: Մյուս կողմից՝ դիմումատուները բնակարանի նկատմամբ ունեցել են միայն օգտագործման իրավունք, ինչը հավասար էր այնտեղ բնակվելու իրավունքին եւ չէր կարող դիտարկվել որպես «գույք»: Այդ իրավունքը

բացարձակ չէր եւ կարող էր դադարեցվել Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի հիման վրա՝ սեփականատիրոջ պահանջով, ինչը տեղի է ունեցել սույն գործում:

31. Ավելին, երրորդ դիմումատուն նույնիսկ չի ունեցել օգտագործման ինքնուրույն իրավունք, քանի որ նա անչափահաս էր եւ, համաձայն «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, ուներ իր մոր՝ երկրորդ դիմումատուի հետ այդ տանն ապրելու իրավունք: Ամփոփելով՝ քանի որ դիմումատուները չեն ունեցել գույք, նրանց բողոքը *ratione materiae* (առարկայական ընդհատության առումով) անհամատեղելի է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթների հետ:

32. Դիմումատուները նշել են, որ իրենք երեքն էլ այդ բնակարանի նկատմամբ ունեցել են օգտագործման իրավունք: Դա հաստատվել էր գործում առկա ապացույցներով եւ մասնավորապես՝ ներպետական դատարանների եզրահանգումներով, որոնք որոշել էին դադարեցնել երեք դիմումատուների օգտագործման իրավունքը: Այդ իրավունքը գույքային իրավունք էր եւ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով համարվում էր «գույք»:

33. Դիմումատուներն այնուհետեւ նշել են, որ իրենց գույքից զրկելը չի իրականացվել օրենքով նախատեսված պայմաններով, եւ խախտվել է, մասնավորապես, Սահմանադրության 28-րդ հոդվածի եւ Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի պահանջները: Վերջին դրույթը, մասնավորապես, սահմանում էր, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքը կարող էր դադարեցվել միայն բնակարանի *սեփականատիրոջ* պահանջով: Սակայն Վերաքննիչ դատարանի կողմից «Վիզկոն» ՍՊԸ-ի պահանջը բավարարելու ժամանակ՝ մասնավորապես 2005 թվականի հունիսի 3-ին, բնակարանը դեռ չէր պատկանում պետությանը եւ սեփականության իրավունքով պատկանում էր բացառապես Կ.Հ.-ին: Բնակարանի նկատմամբ պետության սեփականության իրավունքը գրանցվել է միայն 2005 թվականի հունիսի 24-ին, եւ այս հարցը երբեւէ նույնիսկ չի բարձրացվել Վճռաբեկ դատարանի վարույթի ընթացքում:

34. Դիմումատուները վերջապես պնդել են, որ իրենց գույքից զրկելը չի հետապնդել իրավաչափ նպատակ՝ ընդհանուր շահի տեսանկյունից, քանի որ այն իրականացվել է միայն ի շահ մասնավոր կազմակերպության՝ «Վիզկոն» ՍՊԸ-ի: Ավելին, նրանց առաջարկված փոխհատուցման գումարը եղել է կամայական եւ չհիմնավորված:

Բ. Դատարանի գնահատականը

1. Ընդունելիությունը

35. Դատարանը գտնում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին դիմումատուների բողոքի անհամապատասխանության հարցի վերաբերյալ Կառավարության առարկությունը սերտորեն կապակցված է դիմումատուների՝ այդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքի էությանը եւ ուստի պետք է միացվի գործի ըստ էության քննությանը:

36. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

2. Ըստ էության քննությունը

ա) Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն դիմումատուների՝ գույքից օգտվելու իրավունքի իրականացմանը

37. Դատարանը նշում է, որ, ըստ Կառավարության պնդման, դիմումատուները չեն ունեցել «գույք»՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Դատարանը, այնուհանդերձ, նշում է, որ այն [մեկ այլ գործով] արդեն գտել է, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքը «գույք» է՝ այդ հոդվածի իմաստով (տե՛ս Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործը՝ վերետում հիշատակված, § 56):

38. Ինչ վերաբերում է մասնավորապես երրորդ դիմումատուին, ապա Դատարանը նշում է, որ Կառավարության պնդումը չի հիմնավորվում ներպետական դատարանների եզրահանգումներով, որոնք գտել են, որ բոլոր դիմումատուներն ունեցել են բնակելի տարածությունից օգտվելու իրավունք եւ որոշել են դադարեցնել այդ իրավունքը՝ փոխհատուցում վճարելու միջոցով:

39. Դատարանը հանգել է այն եզրահանգման, որ սույն գործով բոլոր դիմումատուներն ունեցել են տվյալ բնակարանի օգտագործման իրավունք, եւ այդ իրավունքի դադարեցումը՝ Երեւան քաղաքի կենտրոնում կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով, համարվում է միջամտություն դիմումատուների՝ գույքից անարգել օգտվելու իրավունքին՝ գույքից զրկելու միջոցով (*նույն տեղում*, §§ 59 եւ 61): Հետեւաբար Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթներին դիմումատուների բողոքի անհամապատասխանության վերաբերյալ Կառավարության առարկությունը պետք է մերժվի:

բ) Արդյո՞ք միջամտությունը դիմումատուների՝ գույքից օգտվելու իրավունքի իրականացմանը եղել է հիմնավորված

40. Դատարանը վերահաստատում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջնային եւ ամենակարեւոր պահանջն այն է, որ պետական մարմինների կողմից միջամտությունը գույքից անարգել օգտվելու իրավունքի իրականացմանը պետք է լինի օրինական. առաջին պարբերության երկրորդ նախադասությամբ թույլատրվում է գույքից օգտվելու իրավունքի դադարումը միայն «այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով», իսկ երկրորդ պարբերությամբ սահմանվում է, որ պետությունն իրավունք ունի իրականացնելու վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ՝ կիրառելով «օրենքները»: Ավելին, իրավունքի գերակայությունը, հանդիսանալով ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը, ներհատուկ է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին (տե՛ս Հունաստանի նախկին թագավորը եւ այլք ընդդեմ Հունաստանի [ՄՊ] [*Former King of Greece and Others v.*

Greece [GC]], թիվ 25701/94, §79, ՄԻԵԴ 2000-XII)):

41. Դատարանն այնուհետև նշում է, որ «այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով» արտահայտությամբ առաջին հերթին պահանջվում է պատշաճ մակարդակի մատչելի, բավարար հստակ եւ կանխատեսելի ներպետական իրավական նորմերի առկայություն եւ համապատասխանություն (տե՛ս *Լիտգոուն* եւ այլք ընդդեմ Միացյալ Նահանգների [*Lithgow and Others v. the United Kingdom*], 1986 թվականի հուլիսի 8, §110, շարք Ա թիվ 102, Հենրիքս ընդդեմ Ֆրանսիայի [*Hentrich v. France*], 1994 թվականի սեպտեմբերի 22., §42, շարք Ա թիվ 296-Ա, եւ *Բեյելերն* ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [*Beyeler v. Italy* [GC]], թիվ 33202/96, §109, ՄԻԵԴ 2000-I):

42. Դատարանը նշում է, որ այն նախկինում քննել է Երեւան քաղաքի կենտրոնում կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով իշխանությունների կողմից Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի հիման վրա օգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ բողոք եւ գտել է, որ դիմումատուների գույքի նկատմամբ միջամտությունը եղել է կամայական եւ անօրինական (տե՛ս *Մինասյանը եւ Մեմերջյանն* ընդդեմ Հայաստանի գործը՝ վերելում հիշատակված, §75-76): Սույն գործում Կառավարությունը պնդել է, որ դիմումատուների օգտագործման իրավունքը նույնպես դադարեցվել է 225-րդ հոդվածի հիման վրա՝ լիովին պահպանելով դրա պահանջները, քանի որ տվյալ ժամանակահատվածում պետությունն է եղել այդ բնակարանի սեփականատերը, իսկ նշված հոդվածը թույլատրում էր դիմումատուների՝ օգտագործման իրավունքի դադարեցում՝ համարժեք փոխհատուցման միջոցով:

43. Դատարանը, սակայն, նշում է, որ պետությունը, Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ եւ 176-րդ հոդվածներին համապատասխան, այդ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել միայն 2005 թվականի հունիսի 24-ին, երբ սեփականության իրավունքը պաշտոնապես գրանցվել է (տե՛ս վերելում՝ 19-րդ պարբերությունը): Այսպիսով, «Վիզկոն» ՍՊԸ-ի կողմից դիմումատուների՝ օգտագործման իրավունքը դադարեցնելու պահանջով հայց

ներկայացնելու եւ Վարչական շրջանի դատարանի ու Վերաքննիչ դատարանի կողմից այդ հայցի ըստ էության քննության արդյունքում որոշումներ ընդունելու ժամանակ՝ համապատասխանաբար 2005 թվականի մարտի 16-ին եւ հունիսի 3-ին, այդ բնակարանի միակ սեփականատերը երրորդ անձ էր՝ Կ.Հ.-ն: Կ.Հ.-ի եւ «Վիզկոն» ՍՊԸ-ի միջեւ պայմանագիրը, իրոք, կնքվել էր մինչեւ Վարչական շրջանի դատարանի եւ Վերաքննիչ դատարանի կողմից վերոնշյալ հայցի ըստ էության քննությունը (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը): Սակայն պարզվում է, որ այդ պայմանագիրը չի իրագործվել, իսկ պետության սեփականության իրավունքը պաշտոնապես գրանցվել է միայն Վերաքննիչ դատարանի կողմից կայացված վճռի արդյունքում նույն կողմերի միջեւ երկրորդ պայմանագիրը կնքվելուց հետո (տե՛ս վերելում՝ 16-րդ, 17-րդ եւ 19-րդ պարբերությունները): Ավելին, Վճռաբեկ դատարանում գործի քննությունը, որը կայացել է պետության կողմից սեփականության իրավունքն արդեն իսկ ձեռք բերելուց հետո, սահմանափակվել է վճռաբեկ բողոքով եւ նույնիսկ չի անդրադարձել այդ հարցին:

44. Ամեն դեպքում Դատարանը նշում է, որ դիմումատուների՝ օգտագործման իրավունքը դադարեցնելու մասին պահանջ ներկայացնելիս եւ որոշում ընդունելիս հայցվորը եւ դատարանները չեն հիմնվել Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի վրա: Փաստորեն դա իրականացվել է՝ հղում կատարելով Քաղաքացիական օրենսգրքի, մասնավորապես՝ 218-րդ եւ 220-րդ հոդվածների դրույթներին, որոնցով կարգավորվում էր հողամասի հարկադիր օտարման հարցը: Ուստի Կառավարության պնդումը, որ դիմումատուների՝ օգտագործման իրավունքն օրինական կերպով դադարեցվել է Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի հիման վրա, չի հիմնավորվում գործի հանգամանքներով:

45. Դատարանի դիտարկմամբ, ինչպես արդեն վերը նշվել է, դիմումատուների՝ բնակարանի օգտագործման իրավունքը դատարանների կողմից դադարեցվել է Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ եւ 220-րդ հոդվածների վկայակոչմամբ: Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ այդ հոդվածները

միայն նշում են հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հնարավորությունը եւ չեն պարունակում որեւէ դրույթ՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ (տե՛ս վերելում՝ 24-րդ եւ 25-րդ պարբերությունները): Հետեւաբար պարզվում է, որ դիմումատուների՝ օգտագործման իրավունքը դադարեցվել է այն իրավական նորմերի հիման վրա, որոնք կիրառելի չէին նրանց գործով: Դատարանը կարծում է, որ օգտագործման իրավունքի նման դադարեցումն անխուսափելիորեն կհանգեցնէր անկանխատեսելի կամ կամայական հետեւանքների եւ կգրկեր դիմումատուներին իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանությունից: Հետեւաբար այն չի կարող դիմումատուների սեփականությանը նման իրավական հիմնավորմամբ միջամտությունը չներկայացնել որպէս կամայական եւ անօրինական (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդէմ Հայաստանի գործը՝ վերելում հիշատակված, §75-76):

46. Նման եզրահանգումն ավելորդ է դարձնում պարզելը, թե արդյոք հանրության ընդհանուր շահի եւ անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության համար ներկայացվող պահանջների միջեւ առկա է արդարացի հավասարակշռություն (տե՛ս *Սփորոնգը եւ Լոնրոթն ընդդէմ Շվեդիայի* [*Sporrong and Lönnroth v. Sweden*], 1982 թվականի սեպտեմբերի 23, §69, շարք Ա թիվ 52, եւ *Բատրիդիսն ընդդէմ Հունաստանի* [ՄՊ] [*Iatridis v. Greece* [GC]], թիվ 31107/96, §62, ՄԻԵԴ 1999-II):

47. Հետեւաբար տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

48. Դիմումատուներն այնուհետեւ բողոք են ներկայացրել առ այն, որ իրենց գույքից զրկելու հետեւանքով խախտվել է նաեւ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, ինչպէս նաեւ դատական վարույթն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտմամբ:

49. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը, ինչպէս նաեւ այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր

լիազորությունների շրջանակում, գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ: Այստեղից հետեւում է, որ զանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

50. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Կողմերի փաստարկները

1. Դիմումատուները

ա) Վնասը

51. Դիմումատուները պնդել են, որ նյութական վնասի վերաբերյալ իրենց պահանջներն արդյունավետ ներկայացնելու համար իրենք հնարավորություն չեն ունեցել ստանալու որեւէ տեղեկատվություն պետական մարմիններից, քանի որ պետական պաշտոնյաներն ունեցել են տնտեսական շահ կառուցապատման ծրագրերում եւ հետեւաբար արգելափակել են համապատասխան պաշտոնական տեղեկատվություն ստանալու ցանկացած հնարավորություն, մասնավորապես՝ Երեւան քաղաքի կենտրոնում անշարժ գույքի գների վերաբերյալ:

52. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ դիմումատուները պնդել են, որ իրենց օգտագործման իրավունքի արժեքը պետք է հաշվարկվի եկամտի կապիտալացման մեթոդի եւ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված 225-րդ հոդվածով

սահմանված բանաձևի կիրառմամբ: Հիմնվելով նման հաշվարկի վրա՝ դիմումատուներից յուրաքանչյուրը որպես նյութական վնասի հատուցում պահանջել է 7 560 000 ՀՀ դրամ, որը, կիրառելի փոխարժեքի համաձայն, համարժեք է 16 666,30 եվրոյին:

53. Դիմումատուներից յուրաքանչյուրը որպես ոչ նյութական վնասի հատուցում պահանջել է նաեւ 10 000 եվրո՝ պնդելով, որ ապօրինի օտարման եւ անօթեւան մնալու հետեւանքով իրենք ունեցել են հուսալքության եւ անօգնականության զգացում:

բ) Ծախսերը եւ ծախքերը

54. Առաջին դիմումատունն նաեւ պահանջել է 100 եվրո՝ փոստային ծախսերի համար:

2. Կառավարությունը

55. Կառավարությունը պնդել է, որ նյութական վնասի հաշվարկման համար դիմումատուների կողմից առաջարկված բանաձևեր կիրառելի չէ նրանց գործի նկատմամբ, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի փոփոխությունները, որոնցով առաջարկվել էր տվյալ բանաձևեր, ուժի մեջ են մտել միայն 2005 թվականի նոյեմբերի 26-ին՝ սույն գործի հանգամանքներից հետո:

56. Կառավարությունը խնդրել է Դատարանին մերժել դիմումատուների՝ նյութական եւ ոչ նյութական վնասի, ծախսերի եւ ծախքերի մասով պահանջները, քանի որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված նրանց իրավունքները չեն խախտվել:

2. Դատարանի գնահատականը

57. Դատարանը կարծում է, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման

հարցը պատրաստ չէ դրա վերաբերյալ որոշում կայացվելու համար: Այդ հարցը, հետևաբար, պետք է հետաձգվի, եւ սահմանվի հետագա ընթացակարգ՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Կառավարության եւ դիմումատուների միջեւ հաշտության համաձայնության հնարավորությունը:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Որոշում է* դիմումատուներին՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով բողոքն այդ հոդվածի դրույթներին չհամապատասխանելու վերաբերյալ Կառավարության առարկությունը միացնել բողոքի ըստ էության քննությանը եւ մերժում է այն.

2. *Հայտարարում է* դիմումատուներին գույքից զրկելու վերաբերյալ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա ներկայացված բողոքն ընդունելի, իսկ գանգատը մնացած մասով՝ անընդունելի.

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

4. *Վճռում է*, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չէ դրա վերաբերյալ որոշում կայացվելու համար, հետևաբար՝

ա) *հետաձգում է* նշված հարցը.

բ) *առաջարկում է* Կառավարությանն ու դիմումատուներին վճիռը վերջնական դառնալու օրվան հաջորդող երեք ամսվա ընթացքում, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ներկայացնել հարցի վերաբերյալ իրենց գրավոր դիտարկումները եւ մասնավորապես՝ Դատարանին ծանուցել իրենց կողմից ձեռք բերվող ցանկացած համաձայնության մասին.

գ) *հետաձգում է* հետագա ընթացակարգը եւ Պալատի նախագահին *պատվիրակում է* անհրաժեշտության դեպքում միեւնույն

ամրագրելու լիազորությունը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2010 թվականի հուլիսի 20-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտիագո Կեսադա

Ժոզեփ Քասադեալ

Քարտուղար

Նախագահ